


Yumpihp  
ghalope



P. 1911

Институт  
Востоковедения  
Академии Наук  
СССР

1911 № 480

5545

Տարլ Փոլել

Հրատ. Ա. Պոնդախիչանցի

264

ԿԱՐՄԻՐ—  
—ԳԻՇԵՐԸ

Դիմում 1 կող.

(Պատմուածք)

Թարգ. Յար. Միքայելից

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՎՈՏՈԿԵՐԱԿԱՆ  
Ակադեմիա Խորհրդի  
Տպարան Արտ Հրատարակչական Ընկար  
1911

ՀԱՅՈՒԹ  
ԻՆՍԻՏՈՒ  
Տ Ե Կ Ո Յ Ե Դ Ե Ն Ի Ո  
Ակադեմիա Խանութ  
С С С Р

Տ Յ ։ Ա հ

## ԿԱՐՄԻՐ ԳԻՇԵՐԸ

Գեղեցիկ, լուսնեակ գիշեր էր:  
Ժամբով արագ գնում էին երկու երթա-  
սարդներ. մէկը հարսնացու, միւսը՝ փե-  
նացու: Պարոնի գլխարկի տակից երեսում  
էր լուրջ, եռանգոտ դէմքը: Հարսնացուի  
ուկեգոյն, գանգուր մազերից ներքե-  
ժպտում էին ներա շրթունքներն ու խոր-  
ամանկ աչքերը:

Փողոցային լավտերներն ու կիշէ-  
կալուայի կայտանի հրավառութիւն  
լուսաւորում էին մայթերն ազօտ կերպով  
։ Եասս փողոցի անկիւնում սկսում էին  
գործարանի առանց պատուհանների պա-  
տերը. քիչ հեռուն փողոցն անյայտա-  
նում էր երկաթուղու կամարի տակ:  
Բերաւը, որն երկաթուղային ծա-  
ռայող էր, գառնալով իւր ընկերունուն  
ասաց. —

— Ֆրանսենիտ, բաժանուենք այստեղ.  
ետ դարձիր:

Օրիորդի գեղեցիկ աչքերը մթու-  
թեան մէջ պատուեցին տիսրութեամբ:

Ներա շրթունքները քմահաճօրէն ծամա-  
ծոռւեցին և յանդիմանելով շնչաց.—

—Արդէն... պ. Բերւալ, խսկապէս չէի  
մտածում, որ փեսացուիս այդպէս չուտ  
կճանձրացնի՝ մեր ապագայ նիստ ու կա-  
ցի, անտեսական մեծ ու փոքր նախա-  
գծերի ու բախտաւոր լինելու մասին  
եղած խօսակցութիւնը:

Բերւալը նրբազգաց էր յանդիմա-  
նութեան և պարոն բառը նրան վշտա-  
ցրեց:

Դանդաղ քայլում էին փողոցով,  
որ փակուած էր ամեն կողմից, որպէս  
բանտային բակ: Նա նայում էր խորին  
բերկրանքով և քնքշօրէն այն մատաղ,  
գեռաւատի, վայելչակազմ, այնքան պար-  
կեշա, աև հագուստի մէջ սքանչելի օրի-  
որդին. Վերջապէս, հասնելով կամուրջին՝  
նա կանգնեց և, աւելի պնդելով քան  
ոռաջ՝ ասաց.—

50398-ահ

—Եթէ այսքան ուշ չինէր և անվտանգ  
տուն հասնելուդ համար ջկասկասկածէի,  
պատրաստ էի քեզ երկար լսել, իմ ա-  
ղաւանեակ Բայց այստեղ շատ վտանգա-  
ւոր է... Վաղն առաւտօնեան դու պիտի  
զնաս գործի դեռձակունուգ մօտ, իսկ

ես տասը ըոպէից յետոյ պէտքէ հերթա-  
պահութեան գնամ:

—Կայարանը երկու քայլով հեռու է  
միայն: Տեսողութիւնս սուրէ է և ես  
այստեղից տեսնում եմ, որ կայարանա-  
կան ժամացոյցը ցոյց է տալիս տասներ-  
կուսից քառորդ պակաս. ուրեմն՝ մենք  
բաւականին ժամանակ ունենք:

—Ես ցանկանում եմ, ասաց Բերւալը,  
քեզ ուղեկցել գործարանից էլ այն կողմը:  
Այնտեղ ես կսպասեմ այնքան, մինչև որ  
դու կը հասնես բազմերթեկ փողոցը այդ  
պահուն ես հանգիստ կլինեմ:

—Իսկ ես ցանկանում եմ երկար մնալ  
քեզ հետ,—յամառեց Ֆրանսինետը—մի  
մերժիլ ինձ, իմ ընկեր: Ես կասկածաւոր  
եմ և քո մասին այնպիսի բաներ կմտա-  
ծեմ... որ կսկսեմ ինձ զգալ շատ ան-  
բախտ: Մի անհանգստանալ ինձ համար.  
Ես ոչոքից և ոչնչից չեմ վախենում:  
Սէրն երջանկութիւն է քերում:

Բերւալն ստիպուած էր համաձայնել:

Նրանք՝ կրքոտութեամբ զրկախսո-  
նուելով՝ մտան կամուրջի տակը: Նրանց  
շրթունքները միաւորուեցին փոխադարձ  
հաւատով: Նրանք պատկանելու էին մի-

մեանց և այնքան քնքոյշ էին այդ ժա-  
մին։ Ականից զուրս գալով՝ նրանք շարու-  
նակում էին համբուրուել։ Խաւարից  
յետոյ, կայարանային և լապտերների նսեմ  
լուսաւորութիւնից նրանց աշքերը կու-  
րանալու չափ մթնեցին։ Սիրոյ արքե-  
ցութեան մէջ՝ հաղիւ նկատեցին երկու  
սառւերներ, որոնք մօտիկից անցան հաղ-  
ճեպով և կորան մթութեան մէջ։

Իրար ձեռքից բռնած՝ գիւղական  
պարզամտութեմբ, սիրահարները դան-  
դաղ քայլերով բարձրանում էին, այնքան  
իրարով տարուած, որ չէին էլ մտածում  
թէ ինչ կասէին Բերւալի ընկերներն  
իրենց մասին։

Ոյժմ նրանք չէին կամենում խօ-  
սել բայց, նախ քան բաժանուելը, հար-  
կաւոր էր խանգարել լութիւնը։

—Մնաս բարե, իմ սիրելի, մինչև  
վաղը։—Շնչաց մեծ գժուարութեամբ  
ֆրանսինետը, թովիչ ժապով թագցնելով  
բաժանման տիրութիւնը։—Ես փախ-  
չում եմ, որովհետեւ գիտեմ, թէ ինչպէս  
ես վերաբերում ծառայութեանդ։ Եթէ  
ուշանաս՝ ինձ այլես չես ներիլ...

—Ես այդպէս եմ հասկանում իմ պար-

տականութիւնը պատասխանեց երիտա-  
սարդը—և, բացի այդ, եթէ ճշտապահ  
լինեմ, պաշտօնս ու դիրքս կրաքարանա։  
Մի բոսէ մտածիր, ընկերս ամբողջ ութ  
ժամ հերթապահութիւն է անում։  
Նրանք ժպտալով սեղմեցին միմեանց  
ձեռքերն և հրաժեշտ տուին։

Բերւալլ՝ տեսնելով, որ իւր սիրու-  
հին գնաց, նկատեց իւր ուշանալը մի  
քանի բոպէով՝ արագ-արագ անցաւ կայա-  
րանի դահիճը և դորս եկաւ պլատֆորմ։

Նրա ծանօթ իրերը, ուր ինքն էր  
աշխատառմ, առաջին վայրիկեանին թւա-  
ցին շատ տարօրինակ։ Բերւալլ հասաւ  
մինչև սպիտակ, կանաչ ու կարմիր  
գնդերը, որտեղ գտնեւում էր նրա գիտա-  
նոցը։ Այդ դիտանոցը, որ գտնւում էր ոչ  
այնքան մեծ բարձրութեան վրայ, շին-  
ուած էր ապակուց, աղիւսից երկաթից։  
Նրա առջև բացւում էր փոքրիկ տարա-  
ծութիւն մինչև երկգծանի երկաթու-  
ղու ճանապարհը։ Հասնելով դիտանոցի  
երկաթէ սանդուխտներին՝ Բերւալն արագ  
բարձրացաւ։

—Հինգ րոպէ ուշացար։ Փեսացու,  
երես ես առել այ դու...

Բերւալը ժպտաց, բայց ոշինչ չը  
պատասխանեց, նա իւր երջանկութիւնից հպարտանալու չափ գոհ էր: Եւ ծերունու ակնարկներին չկամեցաւ պատառիսաներ: Սովորականին պէս նա հարցրեց ծերունուն:

—Ո՞չ մի նորութիւն, բոլորը կարգին է: Եւ, արագ աշքի անցնելով իւր դիտանցը, մօտեցաւ բացուած պատուհաններին: Այդտեղից երեսում էր մի ճամբայ, տանում էր մինչև Փարիզ, յետոյ էլ ահագին դատարկ տարածութիւն և աւելի մօտ Շաս փողոցի մասը: Իմանալով, որ Ֆրանսինեալ դեռ չէ հասել կամուրջին, նա անհանգիստ՝ սկսեց սպասել ներան, հաւատացած՝ որ ճանաչելու է ներա նազելի ու բարակ ստուերը սև հանդերձաներ մէջ: Բներւալը ուղեղը ցրուած՝ լսում էր ընկերոջը, որը պատրաստում էր գնալու: Եւ, մինչև անգամ, երբ ծերուկը դունից դուրս էր գնում՝ սիրահարուածը դէպի յետ չնայեց: Միայն ծերուկի վերջին խոսքերը Բներւալին սթափեցրեցին:

—Զարմանալի է, որ դու չհանդիպեցիր այդ երկու կաւոչներին ասաց ծերուկը:

—Ի՞նչ կաւոչներ:

—Նրանք, որոնց մասին ես քեզ պատմում էի, (երբ դու մտածում էիր սիրուհուդ մասին)՝ շաբունակեց ծերուկը: Այդ անպիտանները եկան, —պատմում էր ինձ կայարանի ծառայողը, դահլիճըն այն նպատակով՝ իբր թէ գնացըի են սպասում: Նրանց յայտնեցին, որ ցառաւօտ գնացք մի լինելու, և որ կայարանը թափառականների համար չէ: Հաւանական է, որ նրանք մտադիր են եղել թալանել կայարանային դրամարկղը: Նրանց այնտեղից վոնդելու համար ստիպուած են եղել աւրճանակներով սպառնալ, միայն այն ժամանակ են կորել այդ չները՝ երդուելով, որ կվերադառնան և վրէժինդիր կլինեն: Այստեղ, այս անտէր տեղն ամեն ինչ այսպէս է... էհ եղբայր...

Բներւալը՝ մտաքերելով, որ՝ երբ ինքը սիրուհու հետ կամուրջի տակ էին՝ երկու ստուերներ անցան՝ ամբողջ մարմնով սարսուռ զգաց: Խորին վըդովմունքի մէջ, նայելով ճամբին, նա թեքուից դէպի ծերուկը, որն արդէն իջնում էր պի ծերուկը, որն արդէն իջնում էր սանդուխտներից, և սաստիկ յուզուած՝ հարցրեց.

—Պու ասում ես, որ նրանք երկու հոգի էին:

—Այն, երկու հոգի—նկատեց ընկերը, թւում է, որ նրանք կամուրջի տակ թագ են կացել և հիմա էլ այնտեղ են, որով հետեւ այնտեղից դուրս գալիս նրանց չեմ տեսել: Եհ, թէկ ատրճանանակը գրանումս է, բայց ես շատ ու րախ եմ, որ ստիպուած չեմ այդ վտանգաւոր ճամբով գնալ: Ոստիկանութիւնն էլ, գիտես միայն այն ժամանակ է վրայ հասնում, երբ արդէն մի մարդու սպանած են լինում...

Ծերունին հեռանում էր. Բերւալի ականջին էլի միքանի խօսքեր հասան: Հիմա նա կանգնած էր անարժ, այնպիսի սարսափելի գրութեան մէջ, որ ընկերը չհաւատով իրեն կլսի, բղաւեց:

—Ե՞ս, լիր, չփոթուես. հիմա կանցնի № 567: Քեզ ազդանշան կտան, միքանի բոպէից յետոյ կանցնի նոյնպէս № 415... չփոթուես հա կրկնում եմ դարցեալ: Ի սէր Աստծու արտակարդ գնաձի ժամանակն է... երկուսին էլ ուշք դարձրու...

Ընկերը արդէն հեռու էր. Բերւալի

նրա ասածները չհասկացաւ: Նա գողում էր ամբողջ մարմնով, երբ յիշում էր, որ դուրսը գալարւում է խաւար ու ցուրտ գիշերը: Նա մտածեց կանչել ընկերոջը և խնդրել նրան, որպէս զի հասնէր Ֆրանսինեին և ուղեկցի ներան, բայց արգէն ուշ էր: Ծերուկը մթութեան մէջ անյայտացել էր, երիտառարդը եթէ ձայն տար՝ ոչոք չէր լսի: Նա կանգնած ջղայնաբար սեղմում էր սանդուխների երկաթէ ցանկապատը: Որքան էր նրա անհանգութիւնը մեծանում, երբ մտածում էր, որ ինքը մենակ է: Նա շատ աւելի անհանգստացաւ, երբ մտարերեց ընկերոջ ասածները Այդ երկու կաւոշները հիմա կամուրջի տակն են նրանք սպանացել են վրէժինդիր լինել... Նրանք սպասում են... Ֆրանսինը պէտքէ անցնի.. Նէ գուցէ հիմա անցնում է Ա՛խ, նէ ինչու արդէն չէ անցել, ինչու նէ կամուրջի միւս կողմից չէ երեսմ: Ամայի ճամբան թւում էր անվերջ, Բերւալն ընտելացած լինելով՝ դաշտերի ընդարձակութեանը՝ հիմա զգաց սև տենդի սարսուռ ու զող: Միայնակ իր պահնորդական պաշտօնում, ինչպէս գմբեթի

վրայ պահապան, Բերւալը առաջին անգամն էր զգում տանջանք, չսելով և չտեսնելով ոչ մի մտրդու... Ընկերոջ առածները նրան հետևում էին ինչպէս չարդեկ և ուղեղի մէջ, ասես մուրճով ծեռուած՝ դառնում էին անմիտ սարսափ:

Նա վճռեց փախչել դէպի կայարանը, յետոյ կամուրջի տակը և, խելագարի նման, նետուեց դէպի դուրս...

Բայց հնչոցը նրան սթափեցրեց, դէպի պարտականութիւն հրաւիրող ձայնը հրամայեց մնալ. Բերւալին իմաց էին տալիս միւս կայարանից գուրս եկող արտակարգ № 567 գնացքի մասին:

Նա ներս մտաւ դիտանոցը՝ աշքը կամրջին յառած շօշափելով աղդանշանի լծակը և բնազդմամբ շուռ տուեց այն:

Տենդից ազատուածի նման սկսեց մտածել.,, Սրանից յետոյ կլինի նոյնպէս ուրիշ արտակարգ գնացք, ապա՝ միւսը Ես չեմ կարող թողնել դիրքս հազարաւոր ճամբորդներ հանգիստ ու անվտանգ են միայն նրա համար, որ ես այստեղ եմ»

Բերւալը ցնցուեց, երբ լսեց աղմկով մօտեցող գնացքի սուլոցը:

Գնացքը խանգարելով գիշերուայ լուս-

թիւնը ահեղ սուլելով, արտաշնչելով անծուխ, կայծակի պէս սլացաւ ցնցելով սլաքաւորի դիտանոցը: Ապա՝ ինչպէս գալարւող երկար օձ, ոողաց դէպի հեռուն աստիճանաբար փոքրանալով, կարճանալ լով, ծոմուելով և կազմելով անվերջ-տարածութեան մէջ մի սե կէտ:

Սեղմելով լծակի կոթը՝ Բերւալը զգում էր, որ չի կարողանում դիրքից փախչել, որ իւր վրայ վերցնում է մի մեծ պատասխանատվութիւն: Նա գիտակցում էր իր ամբողջ սարսափի ոյժը և, նայուածքը յետ չդարձնելով, միալար կրկնում էր.

— Ինչու՞ Ֆրանսինեաը գետնացքից դուրս չեկաւ:

Յանկարծ... մթին անցքից սուլոց լսուեց և այնքան ուժեղ էր այդ, որ կարծես թէ գնացքի սուլոց լինէր: Բայց այն այդ տանջալից գիշերին այնպէս հոգեմաշ հնչեց, որ Բերւալը մնաց քարացած: Այդ սուլոցն աւելի սարսափելի էր՝ քան գնացքի դղրդոցն ու աղմուկը:

Կաւուշների աղդանշանն էր այդ, որ մի սե ոճիր էր նախագուշակում: Սակայն ով էր մօտեցողը:

Բերւալի գողդողացող ձեռքը թուզեց լծակի կոթը և հուպ տուեց էլեկտրականի կոճակը, որը ծառայում էր միւս կայարանը հասնող գնացքի մասին իմաց տալու համար. Անզգայաբար շարժեց միւս լծակի կոթը, որը պատրաստ էր փոքրիկ անզգուշութիւնից շուռ գալու հայց իւր ամբողջ էռթեամբ, աչքերը յառած և անողորմազին ճմլուող տանջալից սրտով նա կամուրջի մօտ էր վերացել.

Նշակը զնգդնդաց: Բերւալին թուաց, որ լծակի սառնութիւնն անցաւ իւր մարմնի մէջ և նրան ամբողջովին դարձեց մի կտոր սառոյց:

Սարսափից քարանալով, բայց դարձեալ չթողնելով լծակի կոթը, նա տեսաւ լավտերի լուսաւորութեամբ մարդկային երկու կերպարանքներ. որոնք կամուրջի տակից թռան և սկսեցին մտենալ ինչ որ բանի:

Անցաւ երկրորդ գնացքը, բայց Բերւալն այն չտեսաւ. Նա դիտում էր երկու մարդկային կերպարանքի: Յանկարծ նա նկատեց աւելի վայելչակազմ ստուեր Ֆրանսինետը սև հագուստի մէջ:

Հէնց որ երկաց ստուերը՝ երկու տղամարդիկ յարձակուեցին նրա վրայ. Կարճտտե մենամարտութիւն, արագ խեղոգուողի ճիշ և նոյնպէս արագ վերջաւորութիւն:

Երեք ստուերներից մէկը՝ տմենից փոքրը՝ քարացաւ չը շարժուելով տեղիցը և ամբոսջ ծանրութեամբ ընկնելով գետինք Միւս երկուսը թեքուեցին այդ սև ստուերի վրայ, խուզարկեցին, թողին ու փախան:

Բերւալը կատաղութիւնից և սարսափից մոնչալ էր կամենում: Բայց նրա չորացած կոկորդից ձայն չի դուրս եկաւ: Մինչև անգամ նա չկարողացաւ արտասանել.

—Ֆրանսինետին... ներան սպանում են'.. ներան մորթեցին...

Նա կանգնած էր հեկեկալով և ազգանշան էր տալիս անզգայաբար շարժելով իւր լծակները, որպէսզի անվտանգ լինեն հազարաւոր կեանքեր՝ իրեն թեկուզ անհարազատ և ոչ միբելի... Իսկ այդ բոպէին սպանում էին ներան, որն իր համար ամեն ինչ էր, որին նա պաշտում էր՝ ներան, իր հարսնացուին,

կնոջը, իր կեաքն անգին...

Նրան թւում էր, թէ խելքը թըսց-նում է: Նա մտածում էր թողնել, որ գնացը, այն գալարող սև հրէշը, գնայ ականի մէջ, ջաղջախէ սրիկայ մարդասպաններին: Բայց ձեռքը յիշեցնում էր նրան այն, ինչ բանականութիւնն էր մոռացել: Ձեռքն անգիտակցաբար շարժեց լծակը, երրորդ գնացքն էլ ապահով եկաւ անցաւ և անյայտացաւ միւսների պէս ինչպէս հողմ:

Վագոնների մէջ անհոգ ու հանգիստ նստած ճամբորդները տարւում էին: Դուրսը կատարող ոճիրը նրանց չէր վրդովում, նրանք չէին տեսնում այն..

Բերւալն այդ ըոպէին զգաց մի ատելութիւն դէպի բոլոր նրանց, որոնց ինքը պահպանում էր գիշերի փորձանքներից և որոնք ննջում էին այնպէս անվրդով' մուշտակների մէջ փաթաթուած և համոզուած ու առանց կասկածի իրենց ապահովութեան:

Նրանք մինչեւ անգամ չէին երեակայում, որ իրենցից միայն մի քանի քայլ հեռու մարդիկ մորթում, սպանում էին այն տղամարդի հարսնացուին, որի

սիրելին, պաշտող փեսան, դիտանցում, քարացած սարսափից, իր կեանքի գնով ջանում էր անվտանգ ու ապահով դարձնել նրանց ուղին, սլացնում նրանց դէպի այն ամենը, որոնք այնպէս թանկ էին նրանց համար: Իսկ այդ նոյն մարդը դիրքի մէջ անշարժ ականատեսում էր սիրուհու վախճանին:

Բերւալի հոգու մէջ հանգել էր արդէն ատելութիւնը, որ այնպէս կրծում էր նրան քիչ առաջ...

Առաւոտեան երկաթագծային վերահսկիչին' երբ զննում էր ուղին' Բերւալը կանչեց ու յայտնեց, որ ինքը հիւանդ է և կայարանապետից խնդրում է իրեն տեղապահ տալ:

Փառորդ ժամից յետոյ, ոչոքի չպատմելով բոլոր այն տանջանքների մասին, որ ինքն էր կրել այդ սարսափելի գիշերին դէմքն այլայլուած' նա կայարանից արագ դուրս եկաւ: Ծառայողներից մէկը կանչեց նրան.

— Ե՛յ, Բերւալ, դուք չը գիտեք, որ ձեր ընկերուհին ձեր գնալուց յետոյ վերադարձաւ յետ, որովհետեւ նկատել էր երկու կաւոռչների՝ կամուրջի տակ:


Նէ եկաւ և խնդրեց, որ իրեն ուղեկցենք: Այդ միջոցին, բարեբախտաբար, ձեր դիտանոցի ընկերը և երկու բանւոր հէնց տուն էին դառնում և ուղեկցեցին ներան: Վատ էլ չեն արէլ: Ինչ որ մէկին, որը քսան բոպէից յետոյ վըճռել էր կամուրջի տակով անցնել, առաւտու սպանուած են դտել: Հիմա ոստիկանութիւնը ոտքի է կանգնել: Ձեր հարսնացուին յաջողուել է այդ փորձանգից խոյս տար:

Բերւալը, մահու չափ գունատսւած'  
ընկաւ աթոռի վրայ: Յետոյ, արագ վեր  
ցատկելով, սլացաւ ինչպէս քամի:

Միայն այն ժամանակ, երբ նրա  
սառը, դողդովուն շրթունքները զգա-  
ցին Թրանսինի տաք ու ժապտուն շրթունք-  
ներին հպուելը, Բերւալը ոյժ ունեցաւ  
ասել.

— Ինչպիսի տեսդ, Ձրանսինետ ինչպէս  
ես շըմելագարուեցի այն ցաւից, որ ես  
գիշերս կըեցի...

Ահա... դու իրաւացի ես, թանկապին, աննման հրեշտակս, հարիւր հազար անգամ իրաւացի, սէրն երջանկութիւն է քերում...



ФИЛИОЛ  
ЧИСТИКУА  
НОГ НОЗЕДНЯ  
Академія наук  
С

4892



5945

Ա. Վ.

Տ. Ե.

Գիտակող.

Գումարով՝ գնողներին 20% զեղչ։ Առաջարկած գիմել հրատարակչին Թիֆլիս, Տպարան Վ. Պայց Հրատար. Ընկերութ.



0014869

20012013

ՀՀ Ազգային գրադարան



NL0014869

